Digitally signed by
GYULNAZARYAN ANAHIT 5211600096
Date: 17.06.2025 10:09:54

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 12-06-2025 թ. որոշմամբ
««ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 3, Կառավարական տուն 2 -
1.3 Պետական գրանցման համարը		222.160.945132
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-02-08
1.5 ՀՎՀՀ-ն		02657678
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91354499
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		admbajin@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արտաշես Թորոսյան		
Սաթենիկ Մկրտչյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	140	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Կրթության բովանդակային մեթոդական սպասարկման ծրագիր	341,748,480
	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ՄԿՈՒ բարեփոխումների ծրագիր	199,405,400

8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հայաստանում և Մոլդովայում կանաչ և թվային անցման համար ուսուցիչների կրթության փոխակերպում ծրագրի	4,351,000
	Կրթության ոլորտում գենդերային հետազոտությունների ինտեգրացման վերաբերյալ հայեցակարգի մշակման ծրագիր	2,390,000
	Ընդհանուր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների համար հիբրիդային վերապատրաստումներ ծրագրի	14,224,500
	ՈՒսումնաօժանդակ նյութի փորձաքննություններ	1,985,000
	ՄԿՈՒ հաստատությանը կից ՍՄԱՐԹ ֆերմայի աշխատանքի վրա հիմնված ուսուցման նորարարական մոդել շրջանավարտների ծրագիր	6,274,000
	Միկրո-որակավորումներ Եվրոպայից դուրս ծրագիր	3,500,000
	Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի գործողությունների ծրագրի	115,726,400
	Բանկային տոկոս	1,279,181
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	ՈՒսումնաօժանդակ նյութի փորձաքննություն	939,750
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Կրթության բովանդակային մեթոդական սպասարկման ծրագիր	341,748,480	
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ՄԿՈՒ բարեփոխումների ծրագիր	199,405,400	
Հայաստանում և Մոլդովայում կանաչ և թվային անցման համար ուսուցիչների կրթության փոխակերպում ծրագիր	3,237,000	

Կրթության ոլորտում գենդերային հետազոտությունների ինտեգրացման վերաբերյալ հայեցակարգի մշակման ծրագիր	2,390,000
Ընդհանուր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների համար հիբրիդային վերապատրաստումներ	2,778,500
ՈՒսումնաօժանդակ նյութի փորձաքննություն	2,486,037
ՄԿՈՒ հաստատությանը կից SMART ֆերմայի աշխատանքի վրա հիմնված ուսուցման նորարարական մոդել՝ շրջանավարտների ավելի լավ աշխատանքի ծրագիր	3,957,000
Միկրո-որակավորումներ Եվրոպայից դուրս ծրագիր	1,128,422
Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի գործողությունների ծրագիր	131,283,729
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	688,414,568
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	688,414,568

Նշումներ՝

2024թ-ին ԿԳՄՍ նախարարության կողմից ստացված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրված ֆինանսական գումարներից՝ Կրթության բովանդակային մեթոդական սպասարկման ծրագրից , որպես չծախսված գումար բյուջե ետ է վերադարձվել 36 868 100 դրամ և իսկ՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ՄԿՈՒ բարեփոխումների ծրագրից 10 756 558 դրամ: Ընդամենը 47,624,658 դրամ:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 31 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

GM CONSULT LLC

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմնադրամի 2023թ.-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 24.05.2024թ.-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել

ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների գործընթացի վերահսկման համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 08. 05. 2025թ.

Ջի Էմ Քոնսալթ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Միրզոյան

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծնթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	156,848	177,644
Ոչ նյութական ակտիվներ	5	6,481	4,193
		163,329	**181,837**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	38,850	47,180
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	24,166	30,670
Շահութահարկի կանխավճար		-	301
Դրամական միջոցներ	8	43,829	22,151
		106,845	**100,302**
Ընդամենը ակտիվներ		**270,174**	**282,139**
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		32,773	38,934
		32,773	**38,934**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	155,761	168,302
		155,761	**168,302**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	55,893	68,648
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	25,747	6,255
		81,640	**74,903**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**270,174**	**282,139**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ.-ի մայիսի 8-ին:
10-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գործադիր տնօրենի ժ/պ
Արտաշես Թորոսյան

Գլխավոր հաշվապահ
Անահիտ Գյուլնազարյան

ԿԶՆԿԿ
НЦРОМ
NCEDI
02657678

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ.-Ի ԴԵՄՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	**Ծնթ.**	**2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**	**2023թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարի**
Հասույթ	12	407,025	462,188
Ինքնարժեք	13	(411,041)	(478,000)
Շնորհից եկամուտ	14	162,892	154,736
Այլ եկամուտ	15	10,181	10,196
Ծրագրերի գծով ծախսեր	16	(170,142)	(132,677)
Այլ ծախսեր	17	(4,365)	(3,837)
Գործառնական գործունեությունից արդյունք		**(5,450)**	**12,606**
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(368)	125
Շահութահարկի գծով ծախս	18	(343)	(2,590)
Տարվա արդյունք		**(6,161)**	**10,141**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		**-**	**-**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		**(6,161)**	**10,141**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ.-ի մայիսի 8-ին:
10-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գործադիր տնօրենի ժ/պ
Արտաշես Թորոսյան

Գլխավոր հաշվապահ
Անահիտ Գյուլնազարյան

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ.-Ի ԴԵՄՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**28,793**	**28,793**
Տարվա արդյունք	10,141	**10,141**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	10,141	**10,141**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**38,934**	**38,934**
Տարվա արդյունք	(6,161)	**(6,161)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(6,161)	**(6,161)**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**32,773**	**32,773**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ.-ի մայիսի 8-ին:
10-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գործադիր տնօրենի ժ/պ
Արտաշես Թորոսյան

Գլխավոր հաշվապահ
Անահիտ Գյուլնազարյան

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024Թ.-Ի ԴԵՄՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	545,251	614,787
Ստացված դրամաշնորհներ	126,562	145,234
Գործառնական այլ մուտքեր	14,463	12,296
Վճարումներ անձնակազմին և նրանց անունից՝ կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց	(287,774)	(301,505)
Վարձակալական վճարներ	(1,354)	(1,256)
Վճարումներ մատակարարներին	(174,385)	(235,906)
Գործուղումների գծով կատարված վճարումներ	(23,035)	(24,012)
Ընթացիկ վերանորոգման վճարումներ	(162)	(667)
Անդամավճար	(3,382)	(3,059)
Նվիրատվություն	(9,859)	(3,426)
Վճարումներ պետական բյուջե	(155,452)	(178,484)
Վճարված շահութահարկ	(2,589)	(5,861)
Գործառնական այլ ելքեր	(2,126)	(6,769)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**26,158**	**11,372**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար վճարումներ	(4,112)	(7,879)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(4,112)**	**(7,879)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառության մարում	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	**22,046**	**3,493**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**22,151**	**18,533**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(368)	125
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**43,829**	**22,151**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ.-ի մայիսի 8-ին:
10-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գործադիր տնօրենի ժ/պ
Արտաշես Թորոսյան

Գլխավոր հաշվապահ
Անահիտ Գյուլնազարյան

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024Թ.-Ի ԴԵՄՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

1. **Գործունեությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն**

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2017թ. փետրվարի 08-ին: Հիմնադրամի գրանցման համարն է 222.160.945132:

Հիմնադրամի 2020 թվականի օգոստոսի 19-ին կայացած Խորհրդի թիվ 4 արձանագրությամբ հաստատվել է հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրությունը, համաձայն որի «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամն անվանափոխվել է որպես «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»: Հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրությունը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցվել է 2021 թվականի հունվարի 11-ին: Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

Հիմնադրամը հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական, սոցիալական, առողջապահական, տնտեսական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ ակտերով և իր կանոնադրությամբ:

Հիմնադրամի նպատակն է՝ խթանել կրթության ոլորտի զարգացումը և արդիականացումը՝ ի նպաստ սովորողների որակյալ կրթության ապահովմանը, առողջության և սոցիալական պաշտպանվածության բարելավմանը, մրցունակ անձի ձևավորմանը և ինքնիրացման աստիճանի բարձրացմանը, կրթական մասնագիտական ներուժի զարգացմանը:

Հիմնադրամի խորհրդի 2019 թվականի հունիսի 24-ի նիստում կայացված որոշման համաձայն ստեղծվել է Հիմնադրամի «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ), որը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է:

ՄԿՈՒԶԱԿ-ի ստեղծման հիմնական նպատակներն են՝

- նպաստել Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և մասնագիտական ուսուցման, այդ թվում՝ մեծահասակների ուսումնառության (այսուհետ՝ ՄԿՈՒ) համակարգի բարեփոխումներին, զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը,
- աջակցել հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրության ու զարգացման, մրցունակության և սոցիալական համախմբվածության ապահովմանը,
- օժանդակել բոլորի համար ողջ կյանքի ընթացքում հաջողության հասնելու հնարավորությունների ընձեռնմանը՝ հենվելով սովորողների և ունկնդիրների անհատական կարողությունների և տնտեսության ու աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցման վրա,
- նպաստել Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ համակարգի զարգացմանը, միջազգային ինտեգրմանը, շնորհվող որակավորումների և վկայականների միջազգային ճանաչմանը:

Հիմնադրամի խորհրդի 2020թ. դեկտեմբերի 18-ի նիստում կայացված որոշման համաձայն ստեղծվել է Հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկը (այսուհետ՝ ԴՍԵԲ), որը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է:

ԴՍԵԲ-ի ստեղծման հիմնական նպատակներն են՝

- սովորողների որակյալ կրթության ապահովման, առողջության և սեցիալական պաշտպանվածության բարելավումը խթանելը,
- ուսումնական հաստատությունում սովորողների առողջ, բազմազան, հավասարակշռված սննդի տրամադրման արդյունավետությունն ապահովելը,
- աստիճանաբար ընդլայնելով հանրակրթական դպրոցներում սննդի կազմակերպման շրջանակներ, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տարրական դասարանների բոլոր սովորողներին հավասարակշռված, անվտանգ և որակյալ սնունդով ապահովմանն աջակցելը,
- ուսումնական հաստատություններում առողջ սննդի կազմակերպմանը, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը նպաստելը,
- տեղական արտադրությունը խթանելը,
- համայնքը, գործարար շրջանակները, սփյուռքի կազմակերպությունները և այլ դոնորներ դպրոցական սննդի կազմակերպման և զարգացման գործում ներգրավելը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.

Խորհրդի նախագահ՝ Ժաննա Անդրեասյան

Խորհրդի անդամներ՝ Ռուբեն Սիմոնյան

Զարուհի Մաթևոսյան

Վաչե Տերտերյան

Արաքսիա Սվաջյան

Ռաֆայել Գևորգյան

Արմեն Գևորգյան

Աննա Ժամակոչյան

Կարինե Գաբրիելյան

Վլադիմիր Չեռնիգով

Միրա Անտոնյան

Սուսաննա Թադևոսյան

Մելինե Գրիգորյան

Վերժինե Սակեզիյան

Էդուարդ Կարապետյան

Ալեքսանդր Հակոբյան

Նաննա Սկաու

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը խորհուրդն է: Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերը արձանագրվում են: Խորհրդի նիստերը գումարվում են վեց ամիսը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից:

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը: 2024թ.-ին Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 140 մարդ (2023թ.-ին՝ 100 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համաձայն՝ Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված:

ՖՀՄՍ-ները ներկայումս չեն պարունակում ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ հատուկ ուղեցույցներ: Եթե ՖՀՄՍ-ն ուղղորդում չի տրամադրում շահույթ չհետապնդող կազմակերպություններին կոնկրետ գործարքների հաշվառման վերաբերյալ, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնված լինի ՖՀՄՍ-ի ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) հրապարակած «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս՝ Հիմնադրամը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.3 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են՝ ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի,

որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտներ

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից, դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Պարտավորությունների դասակարգում ընթացիկի և ոչ ընթացիկի- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են, որ պարտավորությունները դասակարգվում են ընթացիկի և ոչ ընթացիկի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող իրավունքներով պայմանավորված: Դասակարգման վրա չեն ազդում կազմակերպության ակնկալիքները կամ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը (օրինակ՝ պայմանների խախտումը):

Փոփոխությունները նաև հստակեցնում են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ստանդարտի «պարտավորության մարում» արտահայտության նշանակությունը: Փոփոխությունները կարող են ազդել պարտավորությունների դասակարգման վրա՝ հատկապես այն կազմակերպությունների համար, որոնք նախկինում դասակարգումը որոշելու համար հաշվի են առել ղեկավարության մտադրությունները և որոշ պարտավորությունների վրա, որոնք կարող են փոխարկվել կապիտալի: Վերոնշյալների վրա փոփոխությունների ազդեցությունը պետք է կիրառվի հետընթաց՝ համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի պահանջների:

Հիմնական միջոցներ՝ մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործումը - Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի փոփոխություններով արգելվում է կազմակերպություններին հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքից կատարել նվազեցումներ՝ հիմնական միջոցի միավորի վաճառքից առաջացող ցանկացած մուտքերից՝ ակտիվը նախանշած նպատակով օգտագործելու համար պատրաստելու ժամանակահատվածի ընթացքում: Փոփոխությունները նաև հստակեցնում են, որ կազմակերպությունը պետք է տեստավորի՝ արդյո՞ք ակտիվը գտնվում է պատշաճ վիճակում, երբ գնահատում է տվյալ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական վիճակը: Ակտիվի ֆինանսական ցուցանիշները տեղին չեն նման գնահատման համար: Կազմակերպությունները պետք է առանձին բացահայտեն այն ակտիվներից մուտքերի գումարները և ինքնարժեքները, որոնք չեն ստացել կազմակերպության սովորական գործունեության արդյունքում:

Հղումներ հայեցակարգային հիմունքներին – Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում

Որոշ փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտում՝ թարմացնելով հղումները ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային Հիմունքներին և ավելացվել է բացառություն ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» և ՖՀՄՍՄԿ 21 «Պարտադիր վճարներ» մեկնաբանության շրջանակներում պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ճանաչման համար: Փոփոխությունները նաև հաստատում են, որ պայմանական ակտիվները չպետք է ճանաչվեն ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

2.6 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Հիմնադրամը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկությունը ներկայացվում է օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Հիմնադրամը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները:

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	3.71	4.50
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	20-տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-12-տարի
Տրանսպորտային միջոցներ	5-տարի
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	8-12-տարի
Այլ հիմնական միջոցներ	8-տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները և թույլտվությունները, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր – 10 տարի

3.4 Ակտիվների արժեզրկում

ՀՄ-ների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը

կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Հիմնադրամը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոխարժեք ակտիվների և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս բերելով այն վիճակի, որը պահանջում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն՝ կիրառելով Հիմնադրամի վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել. Հիմնադրամը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս Հիմնադրամը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կոստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Իրացման զուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման զուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

3.7 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնք հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները (ծրագրային, վարչական և այլն), որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հիմնադրամին տրված նվիրաբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես եկամուտ այն տարում, երբ դրանք փաստացի ստացվել են:

3.8 Պահուստ

Հիմնադրամը պահուստը պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ.

ա) Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է (այսինքն՝ ավելի շատ հավանական է, քան՝ ոչ), որ մարելու համար Հիմնադրամից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.

գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Հիմնադրամը պահուստը պետք է ճանաչի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն, և պետք է ճանաչի պահուստի գումարը որպես ծախս:

Հիմնադրամը պահուստը պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը Հիմնադրամը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:

Հիմնադրամը պահուստի հաշվին պետք է մարի միայն այն ծախսերը, որոնց գծով պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Հիմնադրամը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում): Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հիմնադրամը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հիմնադրամը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում. եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Հիմնադրամի հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

- նույն հարկատուից (հարկվող միավորից). կամ՝
- տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.10 Հասույթ

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ կնքված պայմանագրերից» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Հիմնադրամը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Հիմնադրամը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքվեն Հիմնադրամի կողմից: Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտների հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. նույնացնել գնորդի հետ պայմանագիրը,

Քայլ 2. որոշել գնորդի հետ պայմանագիրը

Քայլ 3. նույնացնել գործարքի գինը,

Քայլ 4. բաշխել գործարքի գինը կատարման ենթակա պարտավորություններին,

Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ Հիմնադրամը կատարում է կատարողական պարտավորությունները:

3.11 Աշխատակիցներին հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և աշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ. (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսերը ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյո՞ք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե՞ ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ», կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում՝ բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել Հիմնադրամի կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալ գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամուտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկում

Մնացորդները բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո

տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի իջեցման և հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

1. *Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Այլ ՀՄ-ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**166,720**	-	**34,083**	**33,208**	**12,403**	**2,402**	**248,816**
Ավելացում	-	825	6,115	-	-	92	7,032
Նվազեցում	-	-	-	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**166,720**	**825**	**40,198**	**33,208**	**12,403**	**2,494**	**255,848**
Ավելացում	-	817	2,762	-	165	35	3,779
Նվազեցում	-	-	(2,450)	-	(96)	-	(2,546)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**166,720**	**1,642**	**40,510**	**33,208**	**12,472**	**2,529**	**257,081**
Կուտակված մաշվածություն							
2023թ. հունվարի 31-ի դրությամբ	**6,319**	-	**23,703**	**13,700**	**5,459**	**221**	**49,402**
Տարված ծախս	8,314	-	8,299	11,040	901	248	28,802
Նվազեցում	-	-	-	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,633**	-	**32,002**	**24,740**	**6,360**	**469**	**78,204**
Տարվա ծախս	8,358	76	5,670	7,975	1,068	398	23,545
Նվազեցում		-	(1,463)	-	(53)	-	(1,516)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,991**	**76**	**36,209**	**32,715**	**7,375**	**867**	**100,233**
Հաշվեկշռային արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**160,401**	-	**10,380**	**19,508**	**6,944**	**2,181**	**199,414**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**152,087**	**825**	**8,196**	**8,468**	**6,043**	**2,025**	**177,644**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**143,729**	**1,566**	**4,301**	**493**	**5,097**	**1,662**	**156,848**

2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 50,062 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով (2023թ. -ին՝ 26,352 հազար դրամ):

Հիմնադրամը հիմնական միջոցների ձեռքբերման գծով պայմանագրային պարտականություն չունի:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,492**	**4,492**
Ավելացում	500	**500**
Նվազեցում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,992**	**4,992**
Ավելացում	3,133	**3,133**
Նվազեցում	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,125**	**8,125**
Կուտակված մաշվածություն		
2023թ. հունվարի 31-ի դրությամբ	**517**	**517**
Տարված ծախս	282	**282**
Նվազեցում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**799**	**799**
Տարվա ծախս	845	**845**
Նվազեցում	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,644**	**1,644**
Հաշվեկշռային արժեք		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,975**	**3,975**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,193**	**4,193**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,481**	**6,481**

6. Պաշարներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վառելիք	2,966	3,469
Գրասենյակային և տնտեսական պարագաներ	2,021	2,949
Խոհարարական պարագաներ	6,462	11,711
Քովիդ 19 բժշկական պարագաներ	19,794	19,794
Այլ	7,608	9,257
	38,850	**47,180**

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	14	**1,693**
Շնորհների գծով դեբիտորական պարտքեր	16,078	**19,905**
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	8,069	**9,063**
Այլ դեբիտորական պարտքեր	5	**9**
	24,166	**30,670**

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ (դրամային)	38,495	21,969
Բանկային հաշիվներ (արտարժութային)	5,334	182
	43,829	**22,151**

9. Ակտիվներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	**168,302**	**185,415**
Ստացված շնորհներ	3,042	-
Ընթացիկ շնորհներից վերագրված	794	2,545
Շնորհից եկամուտ	16,378	(19,658)
Տարեվերջի մնացորդ	**155,761**	**168,302**

10. Եկամուտներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	**68,648**	**51,812**
Ստացված շնորհներ	127,149	134,554
Դեբիտորական պարտքի շարժ	-	19,905
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհին	(794)	(2,545)
Շնորհից եկամուտ	(139,110)	(135,078)
Տարեվերջի մնացորդ	**55,893**	**68,648**

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,656	324
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	3,060	79
Աշխատավարձի գծով պարտք	2,552	76
Արձակուրդի պահուստ	10,269	5,218
Այլ կրեդիտորական պարտքեր	211	558
	25,748	**6,255**

12. Հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների մատուցման հասույթ	407,025	462,188
	407,025	**462,188**

Հիմնադրամի ընդհանուր 407,025 հազար դրամի հասույթը ներառում է.

- 404,588 հազար դրամի հասույթը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում «1192. Կրթության որակի ապահովում» ծրագրի «11006. Կրթության

բովանդակային և մեթոդական սպասարկում», «11001. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ» ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումից ձևավորված ծառայությունների մատուցումից, և

- 2,437 հազար դրամի հասույթը՝ ուսումնաօժանդակ նյութերի փորձաքննություններից ստացված:

13. Ինքնարժեք

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձի գծով ծախսեր	297,411	323,142
ՀՄ մաշվածության ծախսեր	9,069	27,078
ՀՄ նորոգման սպասարկման ծախսեր	2,826	3,704
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	-	1,233
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,086	17,618
Գրասենյակային, կոմունալ և տնտեսական ծախսեր	7,175	8,188
Ուսումնական ձեռնարկների գծով ծախս	5,961	14,944
Անդամավճարների գծով ծախս	3,382	3,059
Սեմինարների և հանդիպումների հետ կապված ծախսեր	8,768	85
Մենթոր դպրոցների տրամադրված գումարներ, ապրանքներ	37,869	67,199
ԱՀՄԿ ՀՀ լիիրավ անդամակցության և դրանցից բխող գործընթացների կազմակերպման ծախսեր	-	1,473
ՄԿՈՒ քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ հետազոտական կամ փորձարարական ծրագրերի ծախսեր	-	4,050
Տեղեկատվության տարածման ծախսեր	3,120	5,545
Նվիրատվությունից ծախսեր	-	33
Տրանսպորտային և փոխադրման ծախսեր	211	649
Աշխարհի հմտություններ միջազգային 47 -րդ մրցույթի մասնակցություն	30,163	-
	411,041	**478,000**

14. Շնորհից եկամուտ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող	16,378	19,658
Եկամուտներին վերաբերող	146,514	135,078
	162,892	**154,736**

15. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բանկային հաշվի կապիտալացումից եկամուտ	1,244	1,058
Կառավարման վճարներից եկամուտ	8,691	8,938
Այլ եկամուտներ	246	200
	10,181	**10,196**

16. Ծրագրերի գծով ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձի գծով ծախսեր	84,207	68,855
ՀՄ մաշվածության ծախսեր	14,476	3,116
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	11,352	7,826
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	23,497	17,618
Շինարարական նորոգման և սպասարկման ծախսեր	1,795	5,490
Վարձակալության ծախսեր	2,028	3,103
Նվիրատվությունների ծախսեր	14,511	9,797
Նվիրաբերած ապրանքների փոխադրումների հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով ծախսեր	-	583
Միջոցառումների և դասընթացների գծով ծախսեր	8,700	7,067
Հյուրանոցային, փոխադրման ծախսեր	4,334	5,352
Վառելիքի ծախս	4,213	3,870
Այլ ծախսեր	1,029	-
	170,142	**132,677**

17. Այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գրասենյակային, կոմունալ և տնտեսական ծախսեր	-	1,873
Բանկային ծախսեր	69	29
Չօգտագործված արձակուրդային պահուստ	4,110	929
Այլ ծախսեր	574	1,006
	4,753	**3,837**

18. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	343	2,590
Հետաձգված հարկ	-	-
	343	**2,590**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	(5,818)		12,606	
Շահութահարկ	(1,047)	(18)	2,269	18
Չհարկվող եկամուտներ	(30,888)	(530.9)		
Չնվազեցվող ծախսեր	32,278	554.8	320.92	2.55
Շահութահարկի գծով ծախս	343	5.9	2,590	20.55

19. Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.12-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	16,078	19,905
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,829	22,151
	59,907	**42,056**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքներով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,656	324
	9,656	**324**

20. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

20.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժութային ռիսկին: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը առաջանում է նվիրատվություններից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

21. Իրական արժեք

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկվելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

22. Պայմանականություններ
22.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության վրա և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

22.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունները չկատարելու հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

22.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարընթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Հիմնադրամի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

22.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Հիմնադրամը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

22.5 Դատական հայցեր

2024թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

23. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:

Ռուբլու արժեզրկումը ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների վրա էական ազդեցություն չի ունենա: Փոխարենը դա կազդի այդ փոխանցումների դոլարային արտահայտության վրա: Բնականաբար ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական փոխանցումները որոշակիորեն կնվազեն: Պատմականորեն ՀՀ տնտեսությունը մի քանի անգամ բախվել է նման ցուցումների հետ: Ի տարբերություն նախորդ ժամանակների, ներկայումս Հայաստանի տնտեսությունը շատ ավելի քիչ է կախված դրամական փոխանցումների ծավալներից, իսկ ՌԴ կշիռը այդ դրամական փոխանցումներում զգալիորեն ավելի փոքր է: Կարծում ենք, որ դրամական փոխանցումների որոշակի կրճատումը բացասական կազդի ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն այդ ազդեցությունը գնահատում ենք ոչ շատ մեծ:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

24. Գործարքներ կապակցված կողմերի հետ
24.1 Վերահսկողություն

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունն է: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

1. Գործարքներ հիմնադրի հետ

Հազար դրամ	
Մնացորդը 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	-
Դրամական միջոցների մուտքեր հիմնադրից	541,154
Ծառայությունների մատուցում հիմնադրին	(485,506)
Չծախսված գումարի հետ վերադարձ հիմնադրին	(47,625)
Մնացորդը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,023**

Հազար դրամ	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների մատուցում	-	-	-	-

2. Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2024թ.				
	Վճարված ԱՎՈՒՄ	Գործուղումներ, առհաշիվ տրված գումարներ	Առհաշիվ տրված գումարների մարում	Փոխառության տրամադրում Հիմնադրամին	Հիմնադրամին տրված փոխառության մարում
Գործադիր տնօրենի ժ.պ.	6,404	966	(969)	-	-
ՄԿՈՒՀԱԿ հիմնարկի տնօրեն	4,610	1,264	(1,264)	-	-
ԴՍԵԲ հիմնարկի տնօրեն	6,712	1,126	(1,126)	(520)	520
	17,726	**3,356**	**(3,359)**	**(520)**	**520**

	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ	-	(12,796)	12,796	-
Գործուղումներ և առհաշիվ ծախսեր	3	(2,647)	2,650	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ.-ի մայիսի 8-ին: 10-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գործադիր տնօրենի ժ/պ
Արտաշես Թորոսյան

Գլխավոր հաշվապահ
Անահիտ Գյուլնազարյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 17.06.2025 10:08